

Սուտանի մէջ նախանշեալ օր ջախջախում է «Անթոնով 12» բեռնատար օդանավը: Չոք գազած անձնակազմին վեց անդամներէն չորսը Հայաստանէն են: Արկածը տեղի ունեցած է մայրաքաղաք Խարթումէն 850 քմ. հարաւ գտնուող վառ անաւին մօտ: Ըստ սուտանցի պաշտօնատարներու, օդանաւը ստացած է էջք կատարելու իրաւունք, սակայն օդակայան չհասած, 4 քմ. առաք պայթած է: Աղէտին պատճառը տակաւին յայտնի չէ: Հայաստանի քաղաքացիական օդանաւորչութեան գլխաւոր վարչութեան պետ Սամուէլ Մարգարեան երէկ յայտնեց, որ նախնական տուեալներով պահանջ էն Հայաստանի քաղաքացիներ Սամուէլ Մկրտչեան անձնակազմի հրամանատար, Նշան Յովհաննիսեան՝ գլխաւոր օդաչու, Տիգրան Պետրոսեան՝ երկրորդ օդաչու եւ Յովհի Կոնյոյեան՝ օգնական: Ան նշեց, որ չորսն ալ քաղաքացիական օդանաւորչութեան վարչութեան աշխատակիցներ են:

### ԳԼՍԵՍՎՈՍԻ ՄԷՋ

## ՆԱԽԱԳԱՐՆԵՐ ԱՍԱՏ ԵՒ ԼԱՇՈՒՏ ԱՌԱՒԵԼԱԲԱՐ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸԱՐՑԵՐ ԵՒ ԱՆՈՆՑ ՆԿԱՏԱՍԱՐ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԻԱՑԵԱԼ ԿԵՑՈՒԱԾԸ



Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի հրաւերով, երէկ յետմիջօրէին նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ մէկնեցաւ Դամասկոս, ուր առաջին անգամ ըլլալով դոնփակ հանդիպում մը ունեցաւ նախագահ Ասատի հետ: Շուրջ մէկ ժամուան հանդիպումին ընթացքին նախագահներ Լահուտ եւ Ասատ քննարկեցին շրջանային նորագոյն իրադարձութիւնները: Անոնք շեշտեցին, որ հարկ է ամէն ջանք ի գործ դնել իրականացնելու համար Միջին Արեւելքի մէջ արդար եւ անբողջական խաղաղութեան ծրագիրը, գործադրելով ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի միջազգային որոշումները:

Նախագահներ Լահուտ եւ Ասատ շեշտեցին, որ Սուրիայի կանգնի ու զօրակցի Լիբանանի ապահովութեան կայունութեան ամրապնդման, ինչպէս նաեւ Լիբանանի գերիշխանութեան եւ ներքին միասնականութեան պահպանման:

Նախագահ Ասատ շեշտեց, որ Սուրիայի կանգնի ու զօրակցի Լիբանանի ապահովութեան կայունութեան ամրապնդման, ինչպէս նաեւ Լիբանանի գերիշխանութեան եւ ներքին միասնականութեան պահպանման:

### Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ԹԱՊՊԱՐԱՅԻ ԵՒ ՀԸՄԱՅԷՏԻ ՀԵՏ



Երէկ առաւօտուն, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացնող պատուիրակու թիւն մը յաջորդաբար այցելեց արդարադատութեան նախարար Պահիթ Թապարայի եւ ուժանիւթի նախարար Ալուպ Հըմայէտի: Քաղաքական այս տեսակցութիւններուն ընթացքին քննարկուեցան երկիրը յուլի վերջին իրադարձութիւններն ու տուեալ նախարարութիւններուն կապուած ընդհանուր աշխատանքները:

### ԻՍՐԱԵԼ ԿԸ ՄԵՐԺԵ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՀԱՐՑԻՆ ԳԾՈՎ

Իսրայէլի խորհրդարանին արտաքին կապերու եւ պաշտպանութեան հարցերու յանձնարարութիւնը նախագահը մերժեց Գահիթի միջնորդութիւնը պաղեստինեւերայէլեան զինադուլի մը մասին: Երկու Սթայնից, որ Լիբանոնի անդամ է, Եգիպտոսը ամբաստանեց թշնամութեամբ իսրայէլի եւ իսրայէլեան գործընթացին հանդէպ:

Եգիպտոսի գաղտնի սպասարկութեանց պատասխանատու Օմար Սուէլէյման Երկու Սթայնից օր հանդիպումներ ունեցած էր պաղեստինցի ղեկավարներու հետ՝ զինադուլի ծրագիր մը իրականացնելու ճիգերու ծիրէն ներս: Սթայնից զիտել տուաւ սակայն, որ եթէ նոր զինադուլը առիթ պիտի տայ Եգիպտոսի յաւելեալ ազդեցութիւն ունենալու պաղեստինեան իշխանութեան ներս եւ ահաբեկչական շարժումներու վրայ, ապա՝ երկար ժամանակի վրայ անոր ռազմագիտական հետեւանքները շատ աւելի վտանգաւոր պիտի ըլլան իսրայէլի համար:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Նասէր Արաֆատը հաւանութիւն տուած է Եգիպտոսի պատուիրակին ծրագիրին, որ կ'առաջարկէ պատուիրակութիւն մը ուղարկել Կազա՝ զինադուլի գծով բանակցութիւններ կատարելու պաղեստինեան ծայրայեղական շարժումներու հետ: Աւելի ուշ, բոլոր շարժումներու հանդիպումը մը տեղի պիտի ունենայ Գահիթի մէջ:

Միւս կողմէ, բարձրները կը շարունակուին: Երէկ առաւօտեան տասը պաղեստինցիներ վիրաւորուեցան Կազայի մէջ, ուր ներխուժած էին իսրայէլեան ուժեր: Պաղեստինեան ղարիւրներ հաղորդեցին, որ աւելի քան քսան հրետանային եւ զրահապատ փոխադրականներ մտած են Ռաֆա, ուր ինկած են վիրաւորներ: Քանզուած է նաեւ բնակարան մը:

Պաղեստինցիներ իրենց կարգին սպաննեցին իսրայէլացի երկու զինուորներ Երուսաղէմի մօտ հաստատուած անցարգելի մը վրայ: Իսրայէլացի բանբեր մը յայտնեց, որ պաղեստինցի զինեալ մը կրակ բացած է զինուորներուն վրայ:

(ԱՅՓ)

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԵ ԻՍՐԱԵԼԸ

Եւրոպական Միութիւնը գգուշացուց իսրայէլացի պաշտօնատարներ, որ իր համբերութիւնը սկսած է հատնել պաղեստինեան հողերու վրայ բնակեցման վայրերէն կատարուող արտածումներուն հարցին հանդէպ: Իսրայէլի արտաքին գործոց նախարար Սիլվան Շարոնի հետ հանդիպումի մը ավարտին հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ Ե. Միութիւնը կը պահանջէ, որ Երուսաղէմը կը պահանջուի որպէս միասնական քաղաք: Միութիւնը կը պահանջէ, որ Երուսաղէմը կը պահանջուի որպէս միասնական քաղաք: Միութիւնը կը պահանջէ, որ Երուսաղէմը կը պահանջուի որպէս միասնական քաղաք:

### ՏԻԳՐԱՆ ՆԱՂԴԱԼԵԱՆԻ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱԻԱՐՏԵՑԱԻ

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքներու առաջին ատենի դատարանը, դատաւոր Սարգիս Արամեանի նախագահութեամբ, երէկ հրապարակեց Հայաստանի Հանրային Պատկերասփիռի եւ Չայնասփիռի Ընկերութեան խորհուրդի նախագահ Տիգրան Նաղդալեանի սպանութեան քրեական գործի դատավճիռը: Անփոփոխ պահելով Արմէն Սարգսեանի ներկայացուած մեղադրանքը՝ Տիգրան Նաղդալեանի սպանութիւնը պատուիրելու վերաբերեալ, դատարանը Սարգսեանը դատապարտեց 15 տարուան բանտարկութեան: Նոյն պատիժին ենթարկուեցաւ նաեւ սպանութիւնը կատարած ճոն Յարութիւնեան: Անժամանակէն Տիգրան Սարգսեան, Գեղամ Շահրապեան, Յովհաննէս Յարութիւնեան եւ Գրիգոր Պետրոսեան յանցաւոր նկատուեցան սպանութեան օժանդակելու համար եւ դատապարտուեցան յաջորդաբար 12, 11 եւ 7 տարի բանտարկութեան:

### ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՓՈԹՈՐԿԱԼԻ ՆԻՍՏԻ ՄԸ ԸՆԹԱՑՔԻՆ

### ԿԻՄ ԲԱԼԱՅԵԱՆ ԸՆՏՐՈՒԵՑԱՒ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՍ

Հայաստանի Ազգային ժողովը երէկ փակ քուէարկութեամբ Սահմանադրական Դատարանի նոր անդամ ընտրեց Կիմ Բալայեանը: Անոր թեկնածութիւնը ներկայացուցեց Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արթուր Պապատարեանի կողմէ: Քուէարկութեան մասնակցած 85 պատգամաւորներէն 66ը թեր քուէարկեցին, 18ը՝ դէմ: Մէկ քուէարկութիւն նկատուեցաւ անվաւեր: «Արդարութիւն» դաշինքը չմասնակցեցաւ քուէարկութեան:

Նախքան քուէարկութիւնը, պատգամաւորներ տարբեր կարծիքներ յայտնեցին Կիմ Բալայեանի թեկնածութեան մասին եւ հիմնականօրէն դէմ արտայայտուողները կը պատճառարանէին անոր զարբարոցի ըլլալը: «Ազգային Միադատութիւն» կուսակցութեան խմբակցութեան ղեկավար Արտաշէս Գեղամեան, ինչպէս նաեւ պատգամաւոր Մանուկ Գասպարեան իրենց ելույթներուն մէջ խօսեցան անոր շարքաւոր ծնունդ ըլլալու հանգամանքին շուրջ: Գեղամեան նշեց, որ այս նշանակութեամբ երկրին նախագահը կ'ամբարշտէ իր զիրքերը Սահմանադրական Դատարանին մէջ: Այս տեսակէտին դէմ արտայայտուող պատգամաւորներ, որոնց կարգին՝ Համլէթ Յովսէփեան, զիտել տուին, որ քանի մը քաղաքական գործիչներ կը շարունակեն այն վտանգաւոր ու դատապարտելի կեցուածքը, երբ մարդիկ կը դատաւարեցնեն իրենց ծննդավայրերուն ընդմէջէն:

Հ. Յ. Դ. Ազգային ժողովի խմբակցութեան ղեկավար Լեւոն Մկրտչեան ընդգծեց, որ ցաւով է, որ այս կարեւոր հարցը սկզբունքային առումով չի քննարկուել, այլ՝ թեկնածուի ծննդավայրի ենթահողի վրայ է, որ պատգամաւորները կ'աւարտեն իրենց կարծիքները: «Մենք բոլորս մէկ ազգի ներկայացուցիչներ ենք եւ պէտք է աշխատինք ի նպաստ ամբողջ Հայ ազգին», իր ելույթին մէջ նշեց Լեւոն Մկրտչեան:

Թեկնածու Կիմ Բալայեան Ազգային ժողովին ուղղած իր խօսքին մէջ նշեց, թէ կան մարդիկ, որոնք այս հարցը կը քաղաքականացնեն եւ կը կուսակցականացնեն: «Ես երկար ճանապարհ կտրած եմ եւ որեւէ առիթով չեմ խախտած օրէնքը՝ կուսակցական շահը պաշտպանելու համար», նշեց ան:

Իսկ քուէարկութեանը ետք Կիմ Բալայեան շնորհակալութիւն յայտնելով Ազգային ժողովին յայտարարեց, թէ պատրաստ է աշխատելու Սահմանադրական Դատարանին մէջ, որովհետեւ առիւթ մեծ պատրաստուած է: Ազգային ժողովին մէջ մօտ օրէն տեղի պիտի ունենայ Կիմ Բալայեանի երդման արարողութիւնը, մասնակցութեամբ Սահմանադրական Դատարանի նախագահին:

Կիմ Բալայեան ծնած է 1947ին: 1971ին աւարտած է Երեւանի Պետական համալսարանի իրաւաբանական կաճառը՝ իրաւագէտի մասնագիտութեամբ: 1972էն 1975 աշխատած է Համալսարանի նոյն կաճառին մէջ, իսկ 1975էն 1990՝ Հայաստանի արդարադատութեան նախարարութեան մէջ: 1990էն 1995 ընտրուած է Հայաստանի Գերագոյն Խորհուրդի պատգամաւոր եւ իրական կանոնադրողի նախագահ: 1996էն 1997 արգելափակուած է, ապա՝ ազատ արձակուած է: 1992ին եղած է Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմինի իրաւաբանական բաժնի վարիչ: 2002էն 2003 եղած է Ազգային ժողովի պատգամաւոր:

**BOSCH ELECTRO RAFFI**  
Ամէն տեսակ ինքնաշարժներու ելեկտրական նորոգութիւն, Injectionի նորոգութիւն եւ Air Condition  
«Միրմա Շալլուի» ի տեղի  
Ֆեռ. : 01-510366

**Հ. Յ. Դ. ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**  
**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ**  
Խորհրդարանի նախկին նախագահ՝ Երեսփոխան ԸԻՄԵՅՆ ԸԻՄԵՅՆԻ ԿԵՆ  
Նիւթ՝ ԹԱԵՖԻ ՀԱՄԱԶՅՆԱԳԻՐԸ  
Տեղի կ'ունենայ այսօր՝ Չորեքշաբթի, 19 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:30ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» սրահին մէջ:





# ԼՈՒՐԵՐ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇՈՒՄՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆՈՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Կիրակի, 16 Նոյեմբերի առաւօտուն, վեհարանի իր գրասենեակին մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս ընդունեց Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի նորընտիր ընդհանուր քարտուղար դոկտ. Սէմ Քոպիան: Վեհափառը եւ ընդհանուր քարտուղարը հանդիպում մը ունեցան՝ Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդին առնչուած շարք մը հարցեր քննարկելով: Յայտնեց, որ դոկտ. Քոպիան իր նոր պաշտօնը պիտի ստանձնէ 1 Յունուար 2004 թուականին: Վեհափառին եւ նոր ընդհանուր քարտուղարին երկրորդ աշխատանքային հանդիպումը տեղի ունեցաւ նոյն օրը երեկոյեան:

Առաւօտուն Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ մատուցուող Ս. պատարագին ներկայ գտնուեցան դոկտ. Սէմ Քոպիան, ինչպէս նաեւ՝ Անթիլիասի մէջ գումարուող միջազգային Երիտասարդական Համագումարին մասնակիցները:

Պատարագի ընթացքին քարոզէն առաջ խօսք առնելով վեհափառը ժողովուրդին ընդհանուր գիծերով ներկայացուց Անթիլիասի մայրավանքին մէջ յառաջիկայ օրերուն ու շարժումներուն տեղի ունենալիք միջազգային ժողովներուն ու Համագումարներուն նպատակը: Ան յատկապէս շեշտեց. «Համաշխարհայնացած ներկայ աշխարհին մէջ երկրասուրբները, գործակցութիւն ու յարաբերութիւն պէտք է մղիլ ուժը դառնան մեր ազգի ու մեր եկեղեցւոյ կենսաբան: Պէտք է բացուելի արտաքին աշխարհին ու պէտք է բանալ մեր եկեղեցին, մեր մշակույթը, մեր արժէքները, մեր պահանջները եւ հաղորդչիւն ներկայ աշխարհի գրագրութեանը, մտահոգութիւններուն ու մարտունակութեանը: Միայն չմտածենք, թէ ինչ կրնանք տալ, պէտք է նաեւ գիտնալ, թէ ինչ պէտք է առնենք ներկայ աշխարհէն: Միջեկեղեցական շարժումները մեր եկեղեցւոյ Համար իւրապատակ կարեւորութիւն ունեցած է միշտ եւ ունի այսօր, առաւել՝ քան երբեք: Անթիլիասը սակայն ծառայութիւն մատուցած է էքզիստենցիալ շարժումին, նաեւ մեծապէս օգտուած՝ այս շարժումի բարիքներէն, յատկապէս մեր ազգային պահանջարկներուն մարզէն ներս»:

Ապա վեհափառը ներկայացուց Մայր տաճարին մէջ Ս. Պատարագին ներկայ գտնուող դոկտ. Նայնա Քոչին: Ծագումով հնդիկ եւ միջազգային օրէնքի մասնագէտ դոկտ. Քոչին շուրջ 15 տարիներ Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի միջազգային հարցերով գրագրութեանը տնօրէնը եղած է եւ այժմ ակադեմիական ու քաղաքական պատասխանատուութիւններ ունի Հնդկաստանի մէջ: Վեհափառը յայտնեց, թէ ան մօտէն ծանօթ է Հայերու Ցեղասպանութեան, 1987ին Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդին կողմէ հրապարակուած գրքակին («Արմինիա. քննադատական իրադրութիւն») խմբագիրը եղած է եւ մեծապէս օգտակար եղած է Հայ ժողովուրդի իրաւունքներու հետապնդման աշխատանքներուն:

Արամ Ա. կաթողիկոս նաեւ ներկայացուց Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի նորընտիր ընդհանուր քարտուղարը՝ անոր յաջողութիւն մաղթելով յառաջիկայ տարիներու իր ծառայութեան մէջ:

## ՎԵՀԱՓԱՈ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐ ԿՈՒՆԵՆԱՅ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏԱՄԻԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՀԵՏ

Անթիլիասի մէջ գումարուող միջեկեղեցական միջազգային Համագումարներուն առթիւ Ն.Ս.Ս.Ս. Արամ Ա. կաթողիկոս ունեցաւ շարք մը հանդիպումներ ու աշխատանքային նիստեր:

Երկու շաբթի առաւօտ 17 Նոյեմբեր 2003ին, վեհափառ Հայրապետը միտակց աշխատանքային հանդիպում մը ունեցաւ Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի ներկայ ընդհ. քարտուղար դոկտ. Քոնրատ Ռայզըրին եւ նորընտիր ընդհ. քարտուղար դոկտ. Սէմ Քոպիային հետ:

Սոյն հանդիպման ընթացքին երկու ընդհ. քարտուղարները վեհափառ Հայրապետին պարզեցին անցեալ շաբաթ Նիւ Եորքի մէջ տեղի ունեցած ժողովին արդիւնքները: Արդարեւ, ԵՂԽԻ Ամբրիկեան եկեղեցիներուն եւ ՄԱԿԻ ներկայացուցչներուն մասնակցութեամբ տեղի ունեցած այս հանդիպման ընթացքին քննարկուած էին ժողովուրդներու ապահովութեան, գերիշխանութեան, միջազգային օրէնքի, մարդկային իրաւանց եւ ցեղասպանութեան կանխարգիլման եւ այս ծիրէն ներս եկեղեցիներու ու պետութիւններու գործակցութեան առնչուած հարցեր:

Երկու ընդհ. քարտուղարները նաեւ վեհափառ Հայրապետին զեկուցեցին ԵՂԽԻ կապուած շարք մը հարցերու մասին:

Ապա վեհափառ Հայրապետին հանդիպեցան Տիեզերական Պատրիարքութեան երկու ներկայացուցիչները, որոնք դարձաւ կը մասնակցէին Անթիլիասի Մայրավանքին մէջ կայացող Համագումարին: Սոյն հանդիպման ընթացքին արժարժուեցան երկու Ուղղափառ ընտանիքներու միջեւ գործակցութիւնը ամրապնդելու կարելիութիւնները, ինչպէս նաեւ միջեկեղեցական շարժումին Ուղղափառ եկեղեցիներու մասնակցութեան վերաշխտեցան:

## ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԹՅԱՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ (ԷՔԻԻՄԵՆԻՉՔ 21ԲԳ ԳԱՐՈՒՆ ՆԻԻԹԻՆ ՇՈՒՐՁ)

Երկու շաբթի, 17 Նոյեմբեր 2003ին առաւօտուն, Անթիլիասի Մայր տաճարին մէջ տեղի ունեցած առաւօտեան ժամերգութեանը, նախապահութեամբ Ն.Ս.Ս.Ս. Արամ Ա. կաթողիկոսի, պաշտօնական բացումը կատարուեցաւ Միջեկեղեցական միջազգային Համագումարին: Սոյն Համագումարին, որուն կը մասնակցին

աւելի քան 40 բարձրաստիճան պատասխանատուներ աշխարհի գլխաւոր եկեղեցիներէն ու միջեկեղեցական կառույցներէն, նպատակն է քննարկել միջեկեղեցական շարժումին դիմագրուած գլխաւոր հարցերը եւ նոր ուղղութիւններ ճշդել 21րդ դարուն համար:

Համագումարին բացման նիստին իր պատգամը տուաւ վեհափառ Հայրապետը: Շեշտելէ յետոյ ներկայ Համագումարով սկսող գործընթացի առաջնային կարեւորութիւնը էքզիստենցիալ շարժումի պատմութեան մէջ, Արամ Ա. վեհափառ Ս. Գլխաւոր կէտերու մէջ պարզեց էքզիստենցիալ դիմագրուած գլխաւոր մտահոգութիւնները եւ այդ գծով կատարուելիք աշխատանքները նկատմամբ իր տեսակէտները: 1) Համաշխարհայնացումի ներկայ դարը տեղեկատուական, մշակութային ու տնտեսական ընդգաւառներէն ներս ցնցումները յառաջացուած է նաեւ եկեղեցիներու կենսաբան ու միջեկեղեցական շարժումին ներս: էքզիստենցիալ շարժումը չի կրնար անտարբեր մնալ այս երեւոյթին դիմաց: Այս ուղղութեամբ քննարկման լուրջ գործընթաց մը պէտք է սկսի: 2) Անցեալէն ժառանգուած էքզիստենցիալ կառույցները կը կարօտին հիմնական բարեփոխութեան: էքզիստենցիալ առաքելութիւն է, տեսիլք է եւ ոչ թէ սոսկ կառույց: 3) Պայմաններու բերումով էքզիստենցիալ շարժումը դարձած է եկեղեցակեդրոն: Անկասկած որ եկեղեցիները կարեւոր դեր պէտք է ունենան այս շարժումին ներս: Սակայն էքզիստենցիալ շարժումը պէտք է անդրանցնի եկեղեցիներու նուիրապետական եւ վարչական սահմանները, իր մէջ պարփակելով ամբողջ ժողովուրդը: Հետեւաբար ժողովուրդին մասնակցութիւնը եւ դէպի ժողովուրդ ուղղուածութիւնը պէտք է կարեւոր ազդակները դառնան ներկայ դարու միջեկեղեցական շարժումին: 4) Միջեկեղեցական շարժումին առաքելութիւնը պէտք է դառնայ ներկայ աշխարհի պայմաններուն ու տազնապնդուն եւ եկեղեցիներու կարիքներուն պատասխանիչ: Նաեւ զանազան աշխարհամասերուն մէջ ինքզինք արտայայտող միջեկեղեցական շարժումին աշխատանքները պէտք է աւելի համադրուին, հասարակաց սկզբունքներու շուրջ, պահելով հանդերձ շրջաններու իւրապատկութիւնները: 5) էքզիստենցիալ շարժումին գլխաւոր առաջնահերթութիւնները՝ միութիւն, աւետարանչութիւն եւ ծառայութիւն, կը կարօտին վերանայման ու վերադասաւորման, նկատի ունենալով ներկայ ընկերութեան պարզած նոր առաջնահերթութիւնները եւ եկեղեցւոյ առաքելութիւնը նոր ժամանակներուն: (Վեհափառ Հայրապետին խօսքին ամբողջութիւնը իր անգլերէն ընթացիկով կարելի է կարդալ կաթողիկոսարանի պաշտօնական web site-ին www.catholic.org):

Երկու շաբթի ամբողջ օրը Համագումարը ընդհանուր նիստերու եւ խմբային աշխատանքներու ճամբով շարունակեց իր աշխատանքները:

## ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ ԳՈՒՄԱՐՈՒՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՒ ԱՐՏԵՑԱՒ

Ուրբաթ, 14 Նոյեմբերի առաւօտեան Անթիլիասի մայրավանքին մէջ սկսած միջերիտասարդական միջազգային Համագումարը իր աշխատանքները աւարտեց Կիրակի, 16 Նոյեմբերի երեկոյեան: Յաջորդական երեք աշխատանքային օրերու ընթացքին խումբ մը երիտասարդներ բոլոր աշխարհամասերէն, գլխաւոր եկեղեցիներէն ու շարժումներէն, Անթիլիաս եկած էին միասնաբար քննելու միջեկեղեցական շարժումին ներկայ կացութիւնը, ապա՝ իրենց մտահոգութիւններն ու սպասումները պարզելու:

Երիտասարդական Համագումարին իր բացման պատգամին մէջ վեհափառը յատուկ կերպով շեշտած էր երիտասարդութեան դերը եկեղեցւոյ կենսաբան եւ ընդհանրապէս միջեկեղեցական շարժումին մէջ: Արամ Ա. կաթողիկոս երիտասարդութեան յիշեցուցած էր, թէ «ապագան իր արմատները ունի ներկային մէջ: Ապագան կերտելու համար պէտք է ներկան վերանորոգել: Երիտասարդութիւնը մեր ներկան է՝ ապագային բացած: Ան կրնուած է միջեկեղեցական շարժումը այնպէս նորոգել, որով կարենանք ներկան ապագային կապել: Միջեկեղեցական շարժումը նորոգել՝ կը նշանակէ ամէն բանէ առաջ վերանորոգել եկեղեցին: Վերանորոգեալ եկեղեցին է, որ կրնայ միայն միջեկեղեցական շարժումը վերանորոգել: Եկեղեցւոյ վերանորոգութեան մէջ մեծ դեր ունի երիտասարդութիւնը»:

Համագումարին մասնակից երիտասարդները դասախօսութիւններու, հասարակաց թէ խմբական աշխատանքներու ճամբով արժարժեցին շարք մը հարցեր, փորձեցին իրենց ակնոցով դիտել ներկայ աշխարհը յուզող տազնապնդները եւ անոնց հետեւանքները՝ եկեղեցիներու կենսաբան ու միջեկեղեցական շարժման մէջ: Ապա Համագումարը իր մտահոգութիւններն ու առաջարկները պարզող յատուկ տեղեկագիր մը պատրաստեց: Տեղեկագիրը պիտի յղուի Երկու շաբթի, 17 Նոյեմբերին Անթիլիասի մայրավանքին մէջ բացուած միջեկեղեցական միջազգային այլ Համագումարի մը:

Յայտնեց, որ Համագումարին մասնակցողները Անթիլիաս իրենց կեցողութեան շրջանին ներկայ գտնուեցան Մայր տաճարին մէջ մատուցուող Ս. պատարագին եւ մօտէն ծանօթացան կաթողիկոսարանի զանազան բաժանմունքներուն եւ ընդհանուր գործունէութեան:

## «ԱՉԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանցուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանցուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէ առնուցած օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00: ՄԱՃԱՉԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի միայն ուշ գիշեր, այնքան տեսն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

# ՏՈՍՍ ԶԻ ԲԱԻԵՐ ՄԻԱՅՆ ԳԻՏՆԱԿՆԵՐ ԿՈՄԻՏԱՍԻՆ ԱՆՈՒՆԸ

Արհեստագիտական նորութիւններուն այս հեւքին մէջ ամէն օր աւելի ու աւելի կը շեշտուի համաշխարհայնացման վտանգը, որ ուղղուած է ազգային մշակութիւններուն: Աշխարհը գիւղ մը տեսնելու տեղէն բռնուածները կը նմանին այն մարդոց, անոնք ըլլան կիներ թէ տղաներ, որոնք կամովին կ'ենթարկուին գեղեցկագիտական գործողութիւններու, եւ որոշ ժամանակ մը ետք մեր շուրջը կը տեսնենք մարդիկ, որոնք իրարու կը նմանին: Ունին նոյն վեր քաշուած քիթը, նշածն ու գեմքը, ծիթապտուղի ձեւով աչքերը, ուռած շրթուները, լեցուած այտերը: Ասոնք այնքան կը նմանին իրենց արտաքին երեւոյթին առանձնաշատութիւնները: Այսինքն՝ ճիշդ համաշխարհայնացման շողացքին մէջ ինկած ու միտադր իրիւսի մը վերածուած ժողովուրդներու խառնուրդին, որ ի վերջոյ պիտի խօսի մէկ լեզու, պիտի ունկնդրէ մէկ երաժշտութիւն եւ հսկայական երկրաբանութիւն վրայ պիտի ապրի իբրեւ առանց սահմաններ եւ սահմանագիծեր ճանչնալու, ազգային իւրապատկութիւններ ունենալու անդիմազիծ եւ անողնաշար հաւաքակազմութիւն մը:

Համաշխարհայնացման վտանգէն եւ անոր հետեւանքներէն իրագրելու մտադրակազմութիւնը, որ ազգային պատկանի, կը գիտակցի այս աշխարհակազմի աղետին դեմ դնելու եւ զայն ի սպառ չեզոքացնելու կարեւորութեան, մանաւանդ շատ լաւ ըմբռնած է, որ երկար ժամանակի վրայ անվիճելիօրէն կարիք կը զգացուի հաստատուն կարգերու եւ անասան չափանիշներու:

Համաշխարհայնացման ժխտական ազդեցութիւնները առաւելաբար շատ արագ գալիս պիտի դառնան յատկապէս իրենց հայրենի հողէն շարժուած ժողովուրդներու պարագային, եւ որոնց շարքին է սփիւռքահայը:

Սեփական դիմագիծի պահպանման, ազգային պատկանելիութեան գիտակցութեան եւ հայեցի ինքնութեան ընդունման մեր հիգիենայի մէջ միշտ չէ, որ ճիշդ քայլերուն կը դիմենք, լաւ արդիւնքներու կը հասնինք: Մեր ընկրկումները շատ յանախ հետեւանք են անհետատեսու-

թեան եւ երկար ժամանակի վրայ ծրագրներ չմշակելու մեր անհասկընալի մօտեցումին: Շատ յաճախ կը նախնայ կոմիտասէն, Պետրոս Ադամեանէն, Արամ Խաչատուրեանէն, Այվազովսկիէն, Մեծարեցեցեան եւ Անանիա Շիրակացիէն՝ առանց ճանչցած ըլլալու գանոնք: Այս եւ այլ մեծերու անունները միայն զօքսիտար մեր խօսակցութիւններուն ընթացքին կը յիշենք, բայց հիացումով եւ քիչ մըն ալ չափազանցուած կերպով, որ օտարապետութեան մեր ազգային վարքագիծը կը բացայայտէ, կը գմայլիք Ռեմպրանտով, մտահան կ'ընենք մեր Սուրբեանցը, սիւ եւ գիշեր կ'ունկնդրենք Մոնետրա Քապալլէն եւ Ռուպերթօ Այանիան ու կը մոռանք Լուսինէ Ջաբարեանը, Գոհար Գասպարեանը, Արաքս Դաւթեանը եւ Յասմիկ Պապեանը: Սքանչելի դերասան կը նկատենք Փիլիքը Օթուլը, չենք յիշեր Խորէն Արրահամեանը եւ Սօս Սարգսեանը, կը գմայլիք Ինկրիտ Պերկմանի արուեստով, նոյնիսկ լուր չենք ունենար, որ մենք ալ ունինք Կալիա Նովենց մը, Վարդուհի Վարդեանեան մը, Սվեթլանա Գրիգորեան մը կամ Մելինէ Համամեան մը, Կալիլէոն կը վկայուի չենք, Անանիա Շիրակացիին գոյութեան տեղեկ իսկ չենք, տակաւին ինչ ինչ պատճառներով Թարքանով կը հարբեանք ու մեր Հայկոն կամ Շուշան Պետրոսեանը յետաճանց կը նկատենք:

Այս բոլոր մատնանքներէն անշուշտ ոչ մէկ կերպով կը նշանակեն, թէ կ'ունենք քաշուով մեր պատեաններուն մէջ, եւ ինչ որ հայկական չէ, մերժել: Ո՛վ որ նման համոզում ունի, ինքզինքը դատապարտած է լեզուամուկ, ու ապա մահուան: Բայց երբ օտարները կը գերադասենք մեր կոմիտասէն եւ Կանաչեանէն, անհասկընալի, որ կը հնչէ:

Համաշխարհայնացման խելացնոր վագրին մէջ պիտի տուժենք անդարձման իփօրէն, եթէ մեր արժեքները չապրեցնենք ու զանոնք չմտերմացնենք նոր սերունդին հետ: Վաղը ուշ կ'ըլլայ, եւ երբ համաշխարհայնացումը մեզ արթն ու կուլ տայ, ոչ կոմիտասի «Միրանի ծառ»ը, ոչ Կանաչեանի «Նաւոր»ը, ոչ ալ Այվազովսկիին «Գրոյ ալիքը» մեզ կրնան փրկել:

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

## ԸՆԴՈՒՆՈՒԹԻՒՆ

2003-2004 տարեշրջանի վերամուտին, Հայ Աւետարանական Շամլեան-Թաթիկեան երկրորդական վարժարանի շրջափակը բարեգարգուեցաւ պատիկ պարտէզով մը եւ տանեակ մը նորատունկ ծառերով՝ օժանդակութեամբ Պուրճ Համուտի քաղաքապետութեան, որ առանց զլանալու իր աշակցութիւնը՝ անմիջապէս ընդառնեց վարժարանին տնօրէնութեան դիմումին՝ միաժամանակ իրականացնելով ծաղիկներով ու ծառերով եզերուած շրջափակ մը ունենալու աշակերտութեան երազը:



Թո՛ղ տէրը յաւերժ պետարանը: Հակէ եւ կանգուն պահէ Պուրճ Համուտի քաղաքա-

## ԲԱՄԲԱՍԱՆՔ

«Արաքս» շուկային մէջ ենք, յետմիջօրի ժամն է: Բազմութիւն կայ, մարդիկ կ'երթեկեկեն: Կիներ եւ ազգիկներ կը յամեան ցուցափեղկերուն դիմաց: Երկու հայ երիտասարդուհիներ եւս կը քալեն կողք կողքի: Անոնք կը խօսին մտերմաբար՝ իրենց օրուան փորձառութեան մասին: Կը խօսին քիչ մը բարձր՝ առանց գալու, թէ իրենց ետեւէն ուրիշներ կը քալեն եւ կրնան լսել իրենց խօսակցութիւնը: Ազգիկներէն մէկը կ'ստի իրախն:

- Այսօր վարպետ շատ յոգեցուց գիս, ամբողջ մարմինս կը ցաւի...

Այս խօսքերուն կը միացնէ նաեւ այնպիսի արտաստուրբներ, գորս կարելի չէ փոխանցել նոյնիսկ մտերմութիւնով:

Արդեօք երկրորդ մտերմութիւնն ալ իր օրուան փորձառութեան մասին բաներ մը պատմեց իր ընկերուհիին: Աստուած գիտէ. բայց անոնց ետեւէն քալող հասուն տարիքի պարուրկ կ'արագացնէ իր քայլերը, կ'անցնի յառաջ, չլսելու համար չըսուելիք, ականջ ցուցնող խօսքեր մեր օրերու «ազատամիտներուն»:

Ապա ինքն իրեն հարցում մը ուղղելով՝ պատահական անցորդը կ'ըսէ.

- Արդեօք դժոյքներ երկի՞ր իջած է... Ո՞վ է մեզուտը, «պատուական» վարպետը, թէ՛ «ազատամիտ» օրիորդը: Յետոյ կը յիշէ ներսէս Շնորհալիի «Առաւօտ լուսոյ» աղօթքէն տուն մը եւ կը կրկնէ. «Չար մշակողից, չար սերմանց նորին, չորացոյ զպտուղն...»:

### ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ Է ՈՐԱԿԸ

Սփիւռքի ազգային նկարագրով գոյատևման նախապայման է որակը ընդհանրապես, ազգային գոյատևման չափը ընդհանրապես, ազգային կրթության մակարդակը, որակի հարցերը երկրորդական համարում կամ պարզապես անտեսելի: Երեւոյքը ընդհանուր բնույթ ունի եւ կ'ընդգրկէ հանրային բոլոր մարգերը, եկեղեցին եւ դպրոցը, մշակույթը եւ մամուլը:

Քիչեր կը դիմադրեն անորակի հոսանքին: Ոչ քէ շատեր մոռցած են, այլ պարզապես չեն իմացած հայ բանաստեղծին իմաստուն պատգամը, որ եթէ տիրած ենք, տիրած ենք որակով: Այսօր, աչքի առաջ ունենալով Սփիւռքի ընդհանրութեան պատկերը, բանաստեղծին հետեւութեամբ կրնանք ըսել, որ եթէ պիտի տեսնենք, պիտի տեսնենք մեր որակով: Բարեբախտաբար կան հազարավոր տիպարներ որոնք նախանձախնդրի են որակին, բայց անոնք չեն գտնուիր այնպիսի դիրքերու վրայ, որ կարենան ժողովուրդը առաջնորդել որակի ուղիով:

Ուսումնական, շնորհալի, հայկական պատրաստութիւն եւ ապրում ունեցող հայ կին մը, երկտող մը գրած էր եւ կ'ըսէր, քէ ձեռք կը բաշէ հանրային գործունեութեան, որպէսզի չբթանայ: Այս երիտասարդ մտաւորական կինը ինքզինքը աւելորդ զգացած էր միջավայրի մը մէջ, ուր ինչ որ հայկական է կը համարուի շպար, բանի որ մտաւորական, արուեստի, վաւերականութեան ազգային հարցերը զիջած էին հետեւորական-կարգախօսային, ամբոխավարական եւ ամբոխային մղումներու: Ի՞նչ ընելու համար: Եթէ ազգային որակի հետապնդումը նպատակ է, ի՞նչ կը բանին կազմակերպութիւնները: Եթէ դոյզ կասկածը, քէ ի՞նչ բանի մասին կը խօսինք, կը կրկնենք. ազգային որակի: Ան կարգախօսային տարագնէրով հրապարակ ողորդող խօսք եւ նախաձեռնութիւն չէ: Ափսոսալով ազգային որակի բացակայութիւնը, հայ մտաւորական կինը կ'ուզէ հեռանալ եւ կ'ըսէ՝ չբթանալու համար: Հաւանորթն այս բառը երբեք պիտի չգործածէի, եթէ չհանչնայի եթեպէս: Որքան լաւ պիտի ըլլար, որ ինք հրապարակաւ բացատրէր քէ ի՞նչ կը հասկնար բթացումով: Մեր հաւաքականութիւնները բաշտուին կ'ունենան բթացման տառապանքը բացատրելու, հասկնալու: Բայց որակ պէտք է անորակը տեսնելու համար:

Եթէ որակը անհետացած ըլլար, պատասխանատուներ իրենց նիգերը կը լարէին օտարախօսութեան առջեւ բումբ կանգնելու համար, փոխանակ հետեւելու գահավեժ լնթացքին, որ երբեք լաւ հանգրուանի պիտի չհասցնէ: Եթէ որակը անհետացած ըլլար՝ մեր բեմերը, սրահները, ինքնաշարժը եւ տուները պատանդ բռնած արուեստամեթո, հակահայերէն եւ քիչ մըն ալ փողոցային երգեր, գորս հայերէն կոչելու խայտառակութիւնը ընդունած ենք, վերաբերումի կ'արժանանային: Քաղաքական ղեկավարը, եկեղեցականը, հայ ընտանիքի հայրը եւ մայրը կ'արտաքսէին այս անորակը, որպէսզի հասակ առնէ իրենց զաւակը հայկական որակի մէջ բարխուելով: Հագուստը պարզ, հայ մամուլի սակաւաթիւ արժանաւորներ, դիրք կը ճշդեն, կը խօսին, կը ընենաղատեն: Բայց զանազան շահախնդրութիւններու բաւարարութիւն տալու համար շատեր լուր կը մնան: Թէ ազգը կը նահանջէ, հարց չէ շատերուն համար, անոնք կարեւոր կը նկատեն անմիջական յաջողութիւնը, հետեւորդը, բաժանորդը, ծայրասփիւռի ունկընդիրը կամ հեռատեսիլի դիտողը: Ազգային բովանդակութեան նախանձախնդրութեան տեսանկիւնէն իսկական անտիրութիւն: Բայց ինչպէս միշտ, սխալ գործողները պիտի չվերանային, պիտի վերանային ազգը եւ գալիք սերունդները: Տեղ չկայ, հանդիպման վայր չկայ, որպէսզի ազգային շահի տեսանկիւնէն ընդունին հարցերը, առանց սեթեթի:

Եթէ դեռ կան հազուադէպ մտահոգողներ, անոնք ալ, զանազան պատճառներով, ինչպէս շնորհալի հայ կինը չբթանալու համար, իրենք ալ յուսակոտորած պիտի բողոքեն հրապարակը, որպէսզի անորակի ճշման տակ թափով շարունակուի ապահայացումը: Թէեւ պիտի շարունակուին նաեւ՝ ազգային մշակույթէն, որակէն եւ ապրումներէն խուսելու: Սրահները կրնան ըլլալ մեծ եւ գեղեցիկ, օտար հիւրեր կրնան գալ, շոշականութիւնը գոհունակութեամբ սուղ վճարէ մեծ հիւրանոցներու նաշագինը, բայց մտաւորական հայ կինը իր փէշերը հաւաքած կը հեռանայ: Ոչ մէկը լուր պիտի ունենայ: Թէեւ լուր ունեցողներ ալ եթէ ըլլան, անփառունակ կացութեան լուծում պիտի չփնտռեն, պիտի անգիտանան, կամ պիտի ըսեն, որ մէկը կ'երթայ հազարը կու գայ: Այդ երբ պատահած է:

Շոնդալից նաեւ երբ եւ հանգիստներու առաջին շաբթիկն արտո գրաւելու մարմաշէ առաջ, կան մարդիկ, որոնք պիտի գրադին չբթանալու համար հրապարակէն հեռացողներու հարցով, մանաւանդ՝ բթացման եւ հեռացման պատճառներով:

3. ՊԱՆԵԱՆ

### ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

## «Ն.Մ.Ը.Մ. ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԴԷՄՔԵՐ»

1999ին Հրատարակած «Ն.Մ.Ը.Մ. ի գաղափարաբանութիւնը» գիրքէն ետք, վերջերս նոյն գիրքին խմբագրութիւնը կարծիքով հաստատութեամբ եւ խմբագրութեամբ 120 էջերու ծավալով մը մէջ լոյս տեսաւ «Ն.Մ.Ը.Մ. եւ ազգային մեծ դէմքեր» հատորը՝ հարստացնելով Ն.Մ.Ը.Մ. ի պատմութեան եւ ազգային առաքելութեան նուիրուած հրատարակութիւններուն գրադարանը:

Խմբագրութիւնը իսկ վկայութեամբ, այս աշխատութիւնը «տարիներու ջանքով կատարուած ուսումնասիրական աշխատանք մըն է, որ կը ներկայացնէ Ն.Մ.Ը.Մ. ի յարգանքները ու հպարտանքները արժանացած հոյ մարզային դէմքեր, որոնց կեանքն ու գործը միութեան իրերաւոր սերունդներուն համար եղած է ու կը մնայ ազգային դաստիարակութեան եւ ներշնչման մնացորդն աղբիւր»:

Կարծիքով հաստատութեան ի նշած է անոնց մասին չէր տրամադրած ազգային դէմքերն են հետեւեալները: Կ. Պոլսոյ նախկին պատրիարքներէն Ջաւէն

արք. Տէր եղիայեան, Ամենայն Հայոց երջանկայիշատակ վազգէն Ա. կաթողիկոս, Մեծի Տանն կիլիկիոյ երջանկայիշատակ Ջարեհ Ա. կաթողիկոս, Ամենայն Հայոց երջանկայիշատակ Գարեգին Ա. կաթողիկոս, Մեծի Տանն կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս, Ն.Մ.Ը.Մ. ի հոգեւոր հովիւ Շաւարշ քհնյ. Մեծի Տանն կաթողիկոս, Հայաստանի Ա. Հանրապետութեան պետական դէմքեր Ալեքսանտր Սատիսեան, Նիկոլ Աղբալեան, Համօ Օհանջեան, Ռուբին Տէր Միշակեան, Դրաստամատ Կանայեան, Կարօ Սասունցի, Գոր. Գարեգին Նժդէհ, ազգային հերոս Արշակուծի իրակեան, Հրաչ Փափագեան, Բանաստեղծներ Մատթէոս Ջարիֆեան, Գէորգ Կառվաթեան, Մուշեղ Իշխան, հրապարակագիրներ Վահան Նաւասարդեան եւ Մինաս Թէօֆիլեան:

Իւրաքանչիւր դէմքի մասին անդրադառնալու ընթացքին նախեառաջ կը ներկայացուին անոր կենսագրական հակիրճ տրւագիւցներ, ապա շեշտը կը դրուի անոր տարած հոգեւոր, ազգային-հասարակական թէ մտաւորական

գործունէութեան վրայ, հուսկ՝ կը նշուի այդ դէմքին առնչութիւնը հայ իրականութեան մէջ մարմնակերթական մեծագոյն եւ տիրական միութեան՝ Ն.Մ.Ը.Մ. ի հետ, եկեղեցական, քաղաքական կամ մտաւորական գործիչն կարծիք մը միութեան ազգային առաքելութեան մասին:

Այս նոր հատորին մէջ յատկանշական է մասնաւորապէս առաջին բաժինը, ուր մանրամասն տեղեկութիւններ կան Հայ եկեղեցւոյ նուիրապետական աթոռներու արժանաւոր դահակալներու Ն.Մ.Ը.Մ. ի հետ ունեցած առնչութիւններուն մասին: Նոյն երեւոյթը դժբախտաբար չ'արտայայտուի Հայաստանի Ա. Հանրապետութեան պետական գործիչներուն յատկացած բաժիններուն մէջ: Այս բաժինին համար իրեն միակ աղբիւր օգտագործուած է Ն.Մ.Ը.Մ. ի հիմնադիր Կեղեցիկեան վարչութեան անդամներէն Տիրապետ քհնյ. Ստեփանեանի յիշուածը՝ երեք հոգիներ սկսուածական պատուիրակութեամբ մը Հայաստան այցելութեան եւ այնտեղ սկսուածութեան հիմնադրութեան մասին:

Բայց զարմանալի պէտք չէ թուի, որ ոչ ամբողջական պատմական տուեալներ կան այս գիրքին մէջ, որովհետեւ խմբագիր Կարօ Թիւթիւնեան գիրքին մէջ հրատարակուած իր «Երկու խօսքեր» մէջ կը գրէ, որ այս աշխատութիւնը «ընթացիկ իմաստով Ն.Մ.Ը.Մ. աւանդական դրականութիւն կամ պատմութիւն չէ»: Ծիղզ այս իրողութեան մեկնելով, գիրքին բովանդակութեան պատրաստութիւնը եւ հրատարակութիւնը կը մնայ խիստ ողջունելի նախաձեռնութիւն, այն

իմաստով, որ այս աշխատութիւնը թեան մէջ վերջին հարիւր տարիներուն ընթացքին հայ ժողովուրդին համար ոչ միայն ազգային դէմքեր, կը յայտնուին արդէն իսկ 85ամեայ կեանք ունեցող այս մեծ կողմերին:

Այս տեղ պէտք է նշել, որ գիրքին մէջ Ն.Մ.Ը.Մ. ի իրերեւազգային հաստատութիւն Սփիւռքի տարածքին ստանձնած առաքելութեան մասին իրենց գոյգ վկայութիւնները ունին Ն.Մ.Ը.Մ. ի Կեղեցիկեան վարչութեան նախկին ատենապետ տոբթ. Միսաք Արզումանեան եւ Յ. Գեղարք:

Հատորը նաեւ ուրիշ առանձնաշխատութիւն մը ունի: Ասիակ կ'արտատարուի գանազան ժամանակաշրջաններու ընթացքին կաթողիկոսներու, կուսակցական-ազգային գործիչներու եւ մտաւորականներու Ն.Մ.Ը.Մ. ի մասին արտասանուած պատգամներուն եւ ստորագրուած յօդուածներուն կարեւոր բաժիններուն մէջ տեղեւան եւ հրատարակութեան մէջ: Այսպիսի աշխատանք թերեւս առաջին անգամ ըլլալով կը կատարուի: Պէտք է սպասել, որ օր մը այդ հայտնաբերական պատգամները, յօդուածները, գրութիւնները, յուշերը իրենց ամբողջութեան մէջ հաւաքուին եւ հրատարակուին

ամբողջական հատորի մը մէջ: Այս մէկը Ն.Մ.Ը.Մ. ին պարծանք բերող գործ մը պիտի ըլլայ եւ իր անունը աւելիով պիտի բարձրացնէ հայկական երկնակամարին վրայ:

Վերադառնալով «Ն.Մ.Ը.Մ. եւ ազգային մեծ դէմքեր» հատորին, կրնանք ըսել, որ այս գիրքը կրնայ ունենալ նաեւ ուսուցողական եւ դաստիարակչական մեծ նշանակութիւն: Առանց յաւելուելու կերպով խորանալու պատմական տուեալներուն եւ տեղեկութիւններուն մէջ, Ն.Մ.Ը.Մ. աւանդական սկսուած կրնայ շատ դիւրութեամբ դառնել նշալի դէմքին մասին կենսագրական հակիրճ տեղեկութիւն, ինչպէս նաեւ լեցուիլ ազգային ինքնագիտակցութեամբ եւ գաղափարախօսութեամբ: Սփիւռքեան ուսուցումի այնպիսի պայմաններուն մէջ ասիակ հայապահպանման գլխաւոր բանալիներէն մէկը կրնայ ըլլալ:

ԺԱՔ Գ. ՅԱԿՈԲԵԱՆ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ «ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԻ 30ԱՄԵԱԿԻ ԸԱՄԵՐԳ**

Հովանաւորութեամբ՝  
**Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒ ԸՆԶՐԱՊԵՏԻՆ**

Խմբագրութեամբ՝  
**ՀՈԳՇ. Տ. ՊԱՐԹԵՒ ՎՐԳ. ԿԻԼԻԿԻՍԵԱՆԻ**

Չորեքշաբթի, 19 Սոյնմբեր 2003, երկուշաբթի ժամը 7:30ին, Ազգային Եղիշէ Մանուկեան վարժարանի «Սիրան Մանուկեան» հանդիսարանի, Տրպայալէ:

ԸՐԱԿԵՐԸ ԲՈԼՈՐԻՆ

**«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅԻՆ ԹԻԻԵՐԸ**

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

**ԱՆՍՈՒՄԸ ԳՐԵՆՔ**

**2003**

**Եթէ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտ ես. մասնակցէ՛ «Պատիկ - Սպտիկ»-ի հայերէն ուղղագրութեան մրցումին:**

- Մրցումին կրնան մասնակցել 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:
- Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 10 Սոյնմբերին 2 Դեկտեմբեր. հեռաձայնելով 01 - 260115 թիւին, երկուշաբթին Ուրբաթ օրերը. կէսօրը ետք ժամը 3:00էն 5:00:
- Մրցումը տեղի կ'ունենայ Կիրակի, 7 Դեկտեմբերին, Մեքուպեան վարժարանի սրահին մէջ. կէսօրը ետք, ժամը 3:00էն 4:00 4րդ դասարան, 4:00էն 5:00 5րդ դասարան, 5:00էն 6:00 վեցերորդ դասարան:
- Իւրաքանչիւր մակարդակի շահողը պիտի ստանայ արժեքաւոր նուէր մը. իսկ բոլոր մասնակցողները պիտի ստանան յիշատակի նուէրներ:
- Յաւելել տեղեկութիւններու համար հետեւի «Ավգալ»-ին:

**ԱՅԿԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**


**RENT AND SALE**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

**ՅՈՒՑԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՍԵՆՏԱԿ ԱՅՇՈՒ, ԱՅԵՏԻ ԾԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ԳՆՈ. (01) 242556/7**

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**





# ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Բիւթանիոյ շրջանին մէջ հայեր 1880ական տարիներէն սկսան տարածուիլ զէպի նոր գիւղեր եւ անաւներ: Արսլանապէս մեծ գիւղը հրդեհի պատճառով հրոյ ճարակ դարձաւ, բայց յետոյ վերաշինուեցաւ: Ծահճային տարածութիւններ չորցուեցան՝ առաջը առնելով շարք մը հիւանդութիւններու:

## ՀԱՅԵՐՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԳԵՊԻ ՆՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

Իզմիթի (Նիկոմիդիոյ) սանճագը, իր 13 հազար քառ. քմ. տարածութեամբ, ԺԹ. դարու վեր-

ջաւորութեան եւ Ի. դարու սկիզբի տուեալներով աւելի քան 310 հազար բնակիչ ունէր, որուն 55-60 հազարը հայեր էին, 120 հազարը՝ տեղացի թուրքեր, որոնք հոն հաստատուած էին օսմանեան գրաւման ժամանակ, 25 հազարը՝ յոյներ, հազարը՝ հրեաներ, իսկ մնացեալները՝ ռուսներ, պոչնաք, փոմաք, չերքէզ, չեչէն, ապագա, տաղստանցի, լեզգի, լազ եւ այլ մուհաճիրներ (զաղթականներ) էին:

Բնակչութեան բազմացման այս պայմաններուն տակ շատ մը հայ ընտանիքներ կամ անհատներ 1880ական տարիներէն սկսան բնակութիւն հաս-

տատել ու տեղափոխուիլ տարբեր գիւղեր ու բնակավայրեր, որոնցմէ ոմանք հայկական դիմագիծ ստացան:

Կէյվէ Սթասիոն Կէյվէ գաւառին գլխաւոր կայանն է, որ կարեւորութիւն ստացաւ երկաթուղիին պատճառով, եւ ուր 1882էն սկսեալ Գնճըլարէն, Միջագիւղէն եւ Գուրտպէնէն գացին եւ բնակութիւն հաստատեցին տասնհինգ հայ ընտանիքներ:

Հոն հաստատուեցան նաեւ տասներկու թուրք ընտանիքներ:

Խանտէկ թրքական մեծ գիւղին մէջ Ատաբազարէն, Գնճըլարէն եւ այլ վայրերէ բնակութիւն հաստատեցին արհեստաւոր հայ ընտանիքներ, որոնք արագօրէն կարեւոր դիրքեր գրաւեցին առեւտրական շուկային վրայ:

Արիֆիէ թուրք եւ յոյն խառն բնակչութեամբ գիւղին մէջ Գուրտպէնէնէն, Գնճըլարէն եւ Ատաբազարէն գաղթած քանի մը ընտանիքներ բնակութիւն հաստատեցին: Պարտիզակցի քանի մը ընտանիքներ հաստատուեցան Սեկպան գիւղին մէջ: Գափանճայի մէջ հաստատուեցան շաք-շագցի Գուրու ընտանիքներ, Չեմէի մէջ՝ Քարծի գիւղէն ընտանիքներ, Գանտրա եւ Ինճիրլի աւաններուն մէջ եւս կարեւոր թիւով ընտանիքներ հաստատուեցան:

Հրդեհը հազիւ տարածուած հեռագիր զրկուեցաւ կառավարութեան, եւ անմիջապէս իզմիթէն պետական-պաշտօնական անձեր, զինուորական հրամանատար Սաատօտի տին փաշա, գալմազամ Շեֆքէթ բէկ, զինուորականներ ու ոստիկաններ օգնութեան փութացին, բայց երբ հասան, արդէն գիւղը մոխիրի վերածուած էր:

Առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Յովակիմեան, որ դէպքէն առաջ Արսլանապէսի հովուական այցելութիւն մը տալէ ետք Օվաճըզ հասած էր, յուր առնելով՝ անմիջապէս փութաց աղէտին վայրը:

## ԱՐՍԼԱՆՊԵԿԻ ՀՐԴԵՂԸ

Արսլանապէս գուտ հայրենակ եւ 450 տուն, 2200 հոգի բնակութեամբ մեծ

գիւղին մէջ 22 Նոյեմբեր 1886ի առաւօտուն մեծ հրդեհ մը ծագեցաւ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ կից Պէյթոլու Մահլէսի փողոցին վրայ: Արդարեւ, այրի կնիք մը լաթ լուացած պահուն անոր մօտ գտնուող նպարավաճառի խանութի մը մէջ վառելանիւթի թիթեղները կրակ առին. նոյն պահուն բարձրացաւ սաստկաշունչ հողմ մը՝ հրդեհը տարածելով ամէն ուղղութեամբ: Հակառակ բոլոր ջանքերուն՝ կարելի չեղաւ առաջը առնել եւ կէսօր չեղած արդէն ամբողջ գիւղը հրոյ ճարակ դարձաւ. փրկուեցան միայն ծայրամասերուն գտնուող տասնչորս տուններ:

Հրդեհը հազիւ տարածուած հեռագիր զրկուեցաւ կառավարութեան, եւ անմիջապէս իզմիթէն պետական-պաշտօնական անձեր, զինուորական հրամանատար Սաատօտի տին փաշա, գալմազամ Շեֆքէթ բէկ, զինուորականներ ու ոստիկաններ օգնութեան փութացին, բայց երբ հասան, արդէն գիւղը մոխիրի վերածուած էր:

Առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Յովակիմեան, որ դէպքէն առաջ Արսլանապէսի հովուական այցելութիւն մը տալէ ետք Օվաճըզ հասած էր, յուր առնելով՝ անմիջապէս փութաց աղէտին վայրը:

Առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Յովակիմեան, որ դէպքէն առաջ Արսլանապէսի հովուական այցելութիւն մը տալէ ետք Օվաճըզ հասած էր, յուր առնելով՝ անմիջապէս փութաց աղէտին վայրը:

Առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Յովակիմեան, որ դէպքէն առաջ Արսլանապէսի հովուական այցելութիւն մը տալէ ետք Օվաճըզ հասած էր, յուր առնելով՝ անմիջապէս փութաց աղէտին վայրը:



Ատաբազար

Ճոսթըր, Գրեթի Ժեներայ դրամատան տնօրէն Թուրքիի եւ թաղապետական Զ. շրջանի տնօրէն Պլաք բէկ:

Իր կարգին, պատրիարքարանը կազմեց յանձնախումբ մը Գէորգ Մ. վարդապետ Իւթիւճեանի գլխաւորութեամբ, եւ Պոլսոյ եկեղեցիներէն հաւաքուեցաւ աւելի քան երկու հարիւր ոսկի:

Իզմիթի մէջ եւս օգնութեան յանձնախումբ մը կազմուեցաւ, որ աղէտին յաջորդ օրն իսկ բժշկական օգնութիւն եւ դեղորայք հասցուց. Արսլանապէս: Դրացի գիւղերէն եւ Արմաշի վանքէն եւս դրամ, ցորեն եւ հազուատեղէն հաւաքուեցաւ աղէտեալներուն:

Աղէտեալներուն մէկ մասը առժամարար տեղափոխուեցաւ շրջակայ հայ եւ յոյն գիւղերուն մէջ, բայց մեծ մասը մնաց անպատսպար եւ մինչեւ յա-

Սակայն արսլանապէսցիք տեսնելով, որ նոր կառուցուելիք գիւղին մէջ հիմնովին զլիսվայր պիտի չըլէին իրենց նախկին տեղերը, տուններն ու խանութները, ընդդիմացան պեղումներուն եւ դիմեցին Իզմիթ՝ կառավարութեան:

Կառավարութիւնը ընդառաջեց անոնց եւ կազմեց յանձնախումբ մը, որ քաղաքատեղի նոր յատակագիծ մը՝ հանդարտեցնելով միտքերը: Այսպէսով, Արսլանապէս վերակառուցուեցաւ պատրաստուած յատակագիծի մը վրայ, խաչածէ գիրար կտորոզ լայն փողոցներով, շուկայով ու բարեկարգ բնակարաններով:

## ՃԱԿԻՃՆԵՐՈՒ ԶՈՐԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Իզմիթի շրջանին մէջ



Ատաբազարցի կիներ ձախարակով եւ իլիկով բուրդ մանելու աշխատանքի պահուն

## ԱՐՄԱՇԻ ՎԱՆՔԸ ԵՒ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ ԹԵՄԸ

Նիկոմիդիոյ շրջանի հայութեան հոգեւոր կեդրոնը Արմաշի Զարիսափան Սուրբ Աստուածածին վանքն էր: Արմաշ հայաբնակ գիւղը կը գտնուէր Նիկոմիդիայէն (Իզմիթ) 25 բիլոմէթր հիւսիս-արեւելք, լեռան մը ստորոտը, որուն շուրջ փռուած էին լեռներ ու դաշտեր: Պոլսոյ հայոց պատրիարք Գրիգոր արքեպիսկոպոսի օրով Թաղեոս եպիսկոպոս 1611ին վանքին հիմը դրաւ եւ անոր առաջին վանահայրը դարձաւ: Արմաշ դարձաւ նշանաւոր ուխտատեղի եւ թեմ, որուն կապուեցան Նիկոմիդիայի իր շրջակայքով, Սեօլեօզ, Կիւրլե, Պանտրմա, Պալլըքսիլի, Քիւրմասիլի եւ Պիղա իրենց գիւղերով:

Թաղեոս եպիսկոպոսի վախճանումէն ետք անոր յաջորդեց Մարկոս եպիսկոպոս Պարոնտէր, որուն յաջորդը Նիկողայոս եպիսկոպոս Աստուածաբան 1729ին նորոգեց վանքին տաճարը: Անոր յաջորդեցին Անտոն վարդապետ Արմաշեցի (որ գահակալեց մինչեւ 1741), Յարութիւն արքեպիսկոպոս Կրետացի (1741էն 1751), Աբաղաս եպիսկոպոս Պոլսեցի (1752էն 1766), որ վանքին մէջ մեծ նորոգութիւններ կատարեց եւ աղբիւր շինեց: Աւետիք արքեպիսկոպոս գահակալեց 1766էն 1780: Նշանաւոր տաղերգու Պետրոս եպիսկոպոս Ղափանցիի (1780էն 1784) օրով Պանտրմա բաժնուեցաւ Արմաշի թեմէն: Յովակիմ եպիսկոպոս գահակալեց մինչեւ 1786:

Բարթուղիմէոս եպիսկոպոս Կապուտիկեանի առաջնորդութեան ժամանակ (1786էն 1809) վանքին մէջ կանոնաւոր միաբանութիւն եւ ուսումնարան հաստատուեցաւ, կառուցուեցաւ մատենադարան, տաճարը նորոգուեցաւ եւ վանքը վերաշինուեցաւ աւելի ընդարձակ ու հոյակերտ ձեւով:

Կարապետ եպիսկոպոս Եղոկիայցի (1809-1810) տարի մը միայն պաշտօնավարեց եւ յետոյ Պրոսպայի առաջնորդ ընտրուեցաւ: Պօղոս արքեպիսկոպոս Ղարախոչեանի օրով (1810էն 1825) վանքը եւ եկեղեցին վերանորոգուեցան եւ նոր ուսումնարան բացուեցաւ:

Աղանի Ստեփանոս արքեպիսկոպոս (1825էն 1853) վերաշինեց վանքին առաջնորդարանը, միաբանական քաղը, հիւանդանոցը, ջրղացը, իսկ եկեղեցին գաղղարեց անօրներով ու սպասներով: Երկու անգամ Պոլսոյ պատրիարք ընտրուեցաւ (1831-1839 եւ 1840-1841), բայց միաժամանակ պահեց առաջնորդական իր արժու. յետոյ պատրիարքութեան հրաժարելով՝ ամբողջ ուշադրութիւնը իր թեմին վրայ կեդրոնացուց:

րանորոգեց վանքը եւ տպարան բացաւ՝ ձեռնարկելով «Յոյս» գրական հանդէսին, որ վանքէն հրատարակուեցաւ 1864էն 1877 տարիներուն: Տանարը խարխուլ ըլլալով՝ բակի տուաւ եւ ձեռնարկեց նոր տանարի շինութեան, բայց բոլորեալ վարակուեցաւ եւ վախճանեցաւ 1865ին:

Եփրեմ վարդապետ Հաւուլեանի (1866-1868) օրով, Արմաշի վանքի միաբանութեան առաջարկով եւ Պոլսոյ պատրիարք Պօղոս արքեպիսկոպոս Թաքթեանի հաւանութեամբ Արմաշ կազմեց առանձին վիճակ մօտակալ խաւսալ եւ Փիրահմէտ գիւղերով, իսկ Նիկոմիդիոյ թեմին համար ընտրուեցաւ առանձին առաջնորդ՝ յանձին Նիկողայոս եպիսկոպոս Աղաւեսանի:

Իբրեւ Նիկոմիդիոյ թեմի առաջնորդ՝ 1870ին ընտրուեցաւ Ներսէս արքեպիսկոպոս Վարժապետեան, որ 1874ին Պոլսոյ պատրիարք ընտրուեցաւ: Այնուհետեւ Ստեփանոս Մ. վարդապետ ընտրուեցաւ փոխանորդ եւ 1880ին՝ առաջնորդ: Ստեփանոս արքեպիսկոպոս մինչեւ Մեծ եղեռնը եւ զինադադարէն ետք ալ մինչեւ Իզմիթի աղէտը վարեց Նիկոմիդիոյ թեմը:

Եփրեմ վարդապետ Հաւուլեանէն ետք Արմաշի վանահայրութիւնը ստանձնեց Գեորգ եպիսկոպոս Ալեքսեանեան (1868-1872), որ բարեկարգեց ժառանգաւորաց վարժարանը եւ աւարտեց կիսատ մնացած տանարին շինութիւնը:

Խորէն արքեպիսկոպոս Աշրեքեանի վանահայրութեան օրերուն (1872-1888) 1873ին բացուեցաւ Սուրբ Ղեւոնդեանց գիշերօթիկ բարձրագոյն դպրոցը: Ելեւմտակալ իրենց յաջորդ տաքապետներու պատճառով գոցուեցան «Յոյս» թերթը, գիշերօթիկ դպրոցը, ժառանգաւորաց վարժարանը եւ միաբանութիւնը ալ մասամբ ցրուեցաւ: 27 Սեպտեմբեր 1888ին մեծ հրդեհ մը փնցուց վանքին եւ գիւղին մէկ մասը:

Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեանի վանահայրութեան տարիներուն (1889-1896), 18 Սեպտեմբեր 1889ին բացուեցաւ դպրեվանք, որ հայ եկեղեցւոյ ու ազգին տուաւ ուսեալ կրօնաւորներ ու ուսուցիչներ, որոնք աշխուժ դեր կատարեցին հասարակական եւ մշակութային կեանքին մէջ: Դպրեվանքը ունեցաւ իր մատենադարանը: Նորոգուեցաւ վանքը, գանգակաւունը, շինուեցաւ ընդարձակ բարաշէն ուսումնարան, երեք յարկաւի հիւանդանոց, շերամատուց, փուռ, կատարակազմութեամբ ջրղաց եւ մետաղեայ խողովակներով ջրուղի. տնկուեցան բրբենիի այգիներ:

Մաղաքիա սրբազանի Պոլսոյ պատրիարք ընտրութեանէն ետք անոր յաջորդեց Եղիշէ եպիսկոպոս Գուրբանը: 1915ի Մեծ եղեռնին Արմաշի վանքը բալանուեցաւ, հարուստ մատենադարանը ոչնչացաւ, իսկ միաբանութիւնը տարագրուեցաւ:



Արմաշի վանքին ջրղացը

Իզմիթի միւլթասարիֆը, իր կարգին, բարձրաստիճան պաշտօնատարներ, ոստիկան-զինուորներ եւ ջրհաններ ուղարկեց եւ դիմեց կառավարութեան՝ օգնութիւն խնդրելով: Իր կողմէն, Ազգային գաւառական վարչութիւնը դիմեց պատրիարքարան:

Սուլթան Ապտիլ Համիտ Բ. իր կողմէ հազար ոսկի նուիրեց եւ հրամայեց օգնութեան յանձնախումբ մը կազմել: Յանձնախումբը կազմեց հանգանակիչ մարմին մը, որուն մաս կը կազմէին Պանք Օթոմանի տնօրէն

ջորդ տարին նպաստներով պահեց իր գոյութիւնը:

## ԱՐՍԼԱՆՊԵԿԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Հրդեհէն քանի մը ամիս ետք, 1887 Մարտին կառավարութիւնը պաշտօնեաներ ուղարկեց Արսլանապէս՝ քննելու համար վերաշինութեան գործը: Որոշուեցաւ նոր գիւղը կառուցել նախկին գիւղէն քիչ մը հեռու, ուրիշ ըլլալով մը վրայ: Երկրաչափ Սամիէֆէնտի եւ ճարտարապետ Պետրոս էֆէնտի պատրաստեցին յատակագիծը:

տարածուած չափնատարած ճահճները հիւանդութիւններու եւ յատկապէս ջերմախտի ու քոլերայի պատճառ կը նկատուէին. յատկապէս 1865ին քոլերայի աւերները գործած էր հոն: Սաքարիա գետին եւ Սապանճալիճին լիճին յորդումներէն կազմուած ճախճախուտները ջերմի կեդրոններ դարձուցած էին Իզմիթը եւ Ատաբազարը, որոնց բնակիչները դեղնած եւ վատուողը կը նկատուէին: Հիւանդութիւններու պատճառ կը նկատուէին նաեւ աղբիւրները, որովհետեւ անոնց ջուրերը բաց առուներով կը հոսէին դէպի գիւղերը:

Այս բոլոր պատճառները նկատելու ունենալով կառավարութիւնը 1889ին ձեռնարկեց ճահճները չորցնելու աշխատանքին, այդպէսով առաջը առնելով մնալուն կարգ մը հիւանդութիւններու: Քանի մը տարի ետք կարգ մը գիւղեր մետաղեայ ջրատար խողովակներով օժտուեցան:






Արմաշի կիներ երկանք աղալու պահուն

ԱՍՊԵՏ ՄԱՆԴԻԿԵԱՆ



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ



### Հ.Մ.Ը.Մ. - ՕԼԻՄՓԻԲ 0 - 0

Երեկ կէսօրէ ետք Պուրճ Համուտի Բաղադրապետարանի դաշտին վրայ տեղի ունեցած Հ.Մ.Ը.Մ. - Օլիմպիք բարեկամական մրցումը վերջ գտաւ ճերմակ հաւասարութեամբ: Հակառակ այն իրողութեան որ մրցումէն կը բացակայէին Վարդան Ղազարեան եւ Յակոբիկ Տօնապետեան, Հ.Մ.Ը.Մ. ստեղծեց շարք մը վտանգաւոր առիթներ (որոնց կարգին երկու հարուած՝ սիւնին):

Հ.Մ.Ը.Մ. իր յաջորդ բարեկամական մրցումը պիտի կատարէ Սալամի դէմ, Շաբաթ օր ժամը 2:15ին, նոյնպէս Պուրճ Համուտի Բաղադրապետարանի դաշտին վրայ:

Նշենք, որ Վարդան Ղազարեան վիրաբուժութեան ենթարկուեցաւ երէկ եւ ամիս մը հեռու պիտի մնայ դաշտերէն:

### ՈՂՁՈՒՆԵԼԻ ՆԱԽԱԶՆՈՒԹԻՒՆ ՄԸ

### Հ. Մ. Ը. Մ. Ի ՄԻՋՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Երկար տարիներու բացակայութենէ ետք Հ. Մ. Ը. Մ. Ի միջմասնաճիւղային ֆութպոլի մրցաշարքները, ուրկէ անցեալին կ'ընտրուէին ներկայացուցչականի ֆութպոլիստները, վերստին կը կազմակերպուին:

Արդարեւ, Հ. Մ. Ը. Մ. Ի Շրջանային Ֆութպոլի յանձնախումբի նախաձեռնութեամբ Նոյեմբերին տեղի պիտի ունենան կրտսերներու եւ երէցներու ֆութպոլի մրցաշարքեր, որոնք պիտի ըլլան նախաքայլը՝ մօտ օրէն Հ. Մ. Ը. Մ. Ի ֆութպոլի ախոյեանութեան մը կազմակերպումին:

Կրտսերներու մրցաշարքի առաջին մրցումները տեղի կ'ունենան 22 Նոյեմբերին, ստորեւ՝ յայտագիրը.

- Պուրճ Համուտ (Դրօ) - Ռաուտա (Պայքար) ժամը 10:00ին
- Կրտսերներու ներկայացուցչական - Պուրճ Համուտ (Շաբաթ) ժամը 11:30ին
- Պուրճ Համուտ (Վրացեան) - Պէյրութ (Գ. Վարուժան) ժամը 2:00ին
- Անթիլիաս - Պաուլիսի (Վարաբաղ) ժամը 3:30ին
- Երէցներու մրցաշարքի մրցումները տեղի պիտի ունենան 23 Նոյեմբերին, հետեւեալ յայտագիրով.
- Պուրճ Համուտ 1 - Լէյլաւան ժամը 8:00ին
- Կրտսերներու ներկայացուցչական - Պուրճ Համուտ 2 ժամը 10:00ին
- Պէյրութ (Մուրատ) - Անթիլիաս (Սարգիսեան) ժամը 12:00ին
- Ժտէյտէ - Սերոբ Աղբիւր ժամը 2:00ին

Նաքարտի դրութեամբ այս մրցումներուն յաղթանակ արձանագրող խումբերը աւարտական մրցումներ պիտի խաղան 29 եւ 30 Նոյեմբերին:

### ՃԱՏՐԱԿ

### ԱՐԿԱՐԿՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ՀԱՒԱՍԱՐԵՑԱՆ



Գասպարով՝ երկուամսեայ մրցումից ընթացքից

Երէկ տեղի ունեցաւ Գասպարով - համակարգիչ ճակատումի չորրորդ եւ վերջին մրցումը, որ 27 շարժումին աւարտուեցաւ հաւասարութեամբ: Այսպէսով, մրցաշարքի վերջնական արդիւնքը եղաւ 2 - 2 հաւասարութիւն մը:

Նշենք, որ Գասպարով պարտուեցաւ 2րդ ճակատումը, իսկ յաղթանակով աւարտեց 3րդը. միւս երկու մրցումները աւարտեցան հաւասարութեամբ:

### «ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանումը հասցնեն հրատարակման թուակաճէն առնուած օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱԶՈՒՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

### ԵՒՐՕ - 2004

### ԴԷՊԻ ՓՈՐԹՈՒԳԱԼ 5 ՏՈՄՍԵՐՈՒ ՏԵՐԵՐԸ ԿՐ 3ՍՏԱԿԱՆԱՆ ԱՅՍՕՐ

Այսօր տեղի կ'ունենան Եւրօ - 2004ի վտումի մրցումներու ծիրէն ներս վերջին ճակատումները, որոնք պիտի վճռեն թէ որոնք պիտի ըլլան Փորթուգալի մէջ տեղի ունենալիք Եւրօ - 2004ի մրցումներուն իրենց մասնակցութիւնը ապահովող վերջին 5 երկիրները:



Ռալֆ Կիկ

Տրուած ըլլալով, որ երթի մրցումներուն արդիւնքները խառնած են բոլոր թուղթերը, այսօրուան մրցումները պիտի ըլլան աւելի քան տաք:

Ստորեւ մրցումներուն մասին մանրամասնութիւններ (բոլոր ժամերը՝ Պէյրութի ժամանակացոյցով):

### ԹՈՒՐԵՍԱ - ԼԱՎԹԱԱ (Ժամը 8:30ին)

Պոլսոյ մէջ տեղի ունենալիք այս մրցումը դիրքին պիտի չըլլայ թուրքերուն համար, որոնք Լաթվիոյ մէջ 1-0 արդիւնքով պարտուելու կրած են եւ դաշտ պիտի ներկայանան առանց շարք մը հիւնական մարկիկներու:

Մեկնաբաններ երթի մրցումէն առաջ Լաթվիան դիրքին պատահ կը համարէին, սակայն այժմ երկու անգամ կը մտածեն այս մրցումին գծով նախատեսութիւններ կատարելէ առաջ:

### ՍԼՈՎԵՆԻԱ - ԽՐՈՒԱԹԱԱ (Ժամը 6:30ին)

Երթի մրցումին սլովենացիք 1 - 1 հաւասարութեամբ վերադարձան հայրենիք, խրուաթները դնելով լուրջ դժուարութեան դիմաց: Լիուպիանայի մէջ տեղի ունենալիք այս ճակատումին սլովենացիք յստակ առաւելութիւն ունին: Սակայն երթի մրցումի կողմնաշանակած խրուաթ Տատօ Փրօ, որ «Չէմփիրնի Լիկ»ի ծիրէն ներս Մոնաքօ - Տեփոթիօ Լա Քորունա մրցումին ընթացքին 4 կոլեր արձանագրեց, կրնայ ըսելիք ունենալ...:

### ԿԱԼԵՍՈՒՄԻԱ (Ժամը 9:30ին)

Կալէսի մարկիչ Մարք Հիուզ պէտք է որոշէ, թէ որքան «արկածախնդիր» կազմ մը դաշտ պէտք է իջեցնէ Քարտիֆի մէջ տեղի ունենալիք այս ճակատումին:

Կալէս կը գտնուի տօնական վիճակի մէջ եւ անձկութեամբ կը սպասէ անցնող 45 րոպէսէն պատմութիւններու պատմութիւն:

Ենչանակէ դուրս ձգելու համար Սկոտլանտի, որ երթի մրցումին 1-0 արդիւնքով տապալած էր նարնջագոյններուն կազմը:

### ՆՈՐՎԵԿԻԱ - ՍՊԱՆԻԱ (Ժամը 8:30ին)

Երթի մրցումին իր հողին վրայ 2 - 1 արդիւնքով յաղթանակ արձանագրած Սպանիոյ կազմը Օսլոյի մէջ դժուար մրցում ունի կատարելիք: Դժուարութիւնը ամէնէն աւելի ծանր կը կշռէ Սպանիոյ մարկիչ Ինաքի Սաչկի վրայ, որ պարտութեան մը պարագային կրնայ կորսնցնել պաշտօնը:

«Ապահով կացութեան մէջ չենք եւ գիտարարութիւն մը արձանագրած կազմը պիտի քաջալերեն Քարտիֆի «Միլենիում» դաշտը մինչեւ բերան լեցուցած 72 հազար համակիրներ:




Մարք Հիուզ

### ՆՈՒԱՆՍԱ - ՍԿՈՏԻԱ (Ժամը 9:30ին)

Սկոտլանտի մարկիչ Պերթի Ֆոկս կը հաւատայ, թէ իր տղաքը կրնան պատմութիւն կերտել այսօր, յատկապէս եթէ կոլ մը կարենան նշանակել, որուն տրուած ըլլալով որ նման պարագայի մը Հոլանտա 3 կոլ պէտք

### ԷՆ. ՊԻ. ԷՅ.

### ՆԵՇ ԱՐԶԱՆԱԳՐԵՅ ԻՐ ԱՍՊՈՐԵԶԻ ԱՌԱՋԻՆ «ԹՐԻՓՈՐԼ-ՏԱՊՈՐԸ»



ՆԵՇ

Էն. Պի. Էյ. Ի երէկուան մրցումներուն, Տալաս Մավրիքսի աստղերէն քանատացի Սթիւ Նէշ արձանագրեց իր ասպարէզի առաջին «թրիփըլ-տապըլ»ը եւ իր խումբը առաջնորդեց յաղթանակի:

Տալաս Մավրիքս, որ երէկ 105-98 արդիւնքով պարտութեան մատնեց Փորթլէնտ Թրէյլ-Պլէյզըրը, իւրաքանչիւր մրցումի միջին հաշուով 99 կէտ կ'արձանագրէ եւ ունի 6 մարկիկներ, որոնք իւրաքանչիւր մրցումի առնուազն 10 կէտ կ'արձանագրեն:

Մավրիքսի յաղթանակին մէջ մեծագոյն դերակատարն էր Նէշ, որ արձանագրեց 14 կէտ, 12 ֆիւլթ եւ 10 ռիպաուստ:

Ստորեւ երէկուան մրցումներուն արդիւնքները եւ դասաւորումը.

Ուաշինկթըն - Աթլանթա	106-97
Հիւսթըն - Ֆիլադելֆիա	74-66
Նիւ Եորք - Պոսթըն	89-86
Տալաս - Փորթլէնտ	105-98
Եուքա - Օրլանտօ	90-88

### •ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾՐՋԱՆ

(ԱՏԼՍՆՏԵՍԻ ԳՕՏԻ)	ՑԱՂԹ.	ՊԱՐՏ.
Պոսթըն Սեթիքս	5	5
Նիւ Ճըրզի Նեթս	5	5
Ֆիլադելֆիա Սիքսըրզ	5	6
Ուաշինկթըն Ուիլքըրս	4	6
Նիւ Եորք Նիքս	3	7
Մայնսթի Հիթ	2	8
Օրլանտօ Մեքիք	1	10

### (ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ)

Ինտիանա Փեյզըրզ	8	2
Նիւ Օրլինզ	7	3
Տիքսոնիք Փիքըրզ	6	4
Միլուուոքի Պաքս	5	4
Թորոնթօ Ռեփթըրզ	5	5
Շիքագօ Պոլզ	4	7
Քլիվլենտ Քաւալիքզ	3	7
Աթլանթա Հոքս	3	8

### •ԱՐԵՄՏԵԱՆ ԾՐՋԱՆ

(ՄԻՋԱՐԵՒՄՏԵՍԻ ԳՕՏԻ)		
Հիւսթըն Ռոքեթզ	7	3
Տալաս Մավրիքս	7	4
Տենզըր Նակթըզ	5	4
Մեմֆիս Կիքսիքզ	5	4
Սան Անթօնիօ Սփըրզ	6	5
Եուքա Ճեք	6	5
Միննեսոթա Վուլվզ	5	5

### (ՈՒՂՂՈՒՄ ԳՕՏԻ)

Լոս Անջելըս Լէյքըրզ	8	2
Սիէթլ Սոփթթուքթիքս	6	2
Լոս Անջելըս Քլիփըրզ	4	2
Սարաթսփերօ Քիթլզ	6	4
Փորթլէնտ Թրէյլ Պլէյզըրզ	5	5
Կոլորադօ Սթըյք Ուորիքըրզ	4	5
Ֆիւնիքս Սանզ	3	6

### ՓՈՒԹԻՆ ՊԱՏՐԱՍ ԸԼԼԱԸ ԿԸ ԹԵԼԱԴԻԵ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ



**ՄՈՍԿՈՒԱ, 18 (ԱՅՓ).—** Ռուսական զինեալ ուժերը պէտք է պատրաստուին պայքարելու ապագայի սպառնալիքներուն դէմ եւ անցեալ դարու պատերազմները մղեն, ըսած է նախագահ Վլադիմիր Փուտին՝ զինեալ ուժերու հրամանատարներուն, Երեքշաբթի օր:

«Բանակին պայքարելու կարողականութիւնը, անոր ռազմավարութիւնը եւ մարտավարութիւնը պէտք է ճկուն եւ յարմարեցնու պատրաստ ըլլան, ինչպէս նաեւ՝ փոխուելու եւ զարգանալու կարողութիւնը ունենան, ըսած է ան՝ Երեսփոխանական ընտրութիւններէն նուազ քան 3 շաբաթ առաջ, զինուորական պատասխանատուներու մէկ ժողովին:

Ձինուորական ներկայ բարեկարգումներուն նպատակը ստեղծել է «բանակ մը, ուր ուժերուն մօտակարար պէս կէսը պէտք է արհեստավար ըլլայ մինչեւ 2007ի աւարտը, աւելի ուշ զինուորական ծառայութեան հանձնարան նուազումով մը գայն մէկ տարուան վերածելով», ըսած է ան:

Ձինուորական պարտադիր ծառայութիւնը 2 տարի է ներկայիս:

### ԿՈՐԵՉՅՅԻՆ ԾՐԱԳԻՐԻՆ ՀԱՐՅՈՎ

## ՀԱԿԱՌԱԿ ԻՐԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԶԱՌԱՋԴԻՍՈՒԹԵԱՆ ՌՈՒՇԻՆԿԹԸՆ ՏԱԿԱԻՆ ԳՈՂ ՋԷ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵ ՓՈՒՆԸԼ

**ՊՐԻԻՔՍԷԼ, 18 (ԱՅՓ).—** Իրանի զէպի ճիշդ ուղղութիւն կ'ընթանայ՝ իր կորիզային ծրագրին գծով միջազգային պահանջներուն գոհացում տալու իմաստով, սակայն Ուաշինկթըն տակաւին գոհ չէ արձանագրուած յառաջդիմութենէն, յայտնած է Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլը Երեքշաբթի օր:

Ան ըսած է, որ Ուաշինկթըն չի կրնար գոհ ըլլալ մինչեւ որ Թեհրան լիովին բացայայտէ իր կորիզային ծրագրին բոլոր ծախքերը եւ որեւէ գաղտնի ծրագիր կասեցնէ:

Փաուըլը կը խօսէր Ե. Միութեան նախարարներուն հետ տեսակցութենէ մը ետք:

Ան հարցականի տակ առած է այն կարելիութիւնը, թէ ՄԱԿի կորիզային Միջազգային Գործակալութիւնը, որուն կառավարիչներու մարմինը Հինգշաբթի օր (վաղը) ժողով մը պիտի գումարէ, պիտի կարենա՞յ իրանի մասին բանաձեւի մը շուրջ համաձայնութիւն գոյացնել:

### ԻՐԱՔԻ ԻՇԽՈՂ ԽՈՐԿՈՒՐԴ ԴԻՏԻ ՓՈՐՁԵ ՄԱԿԻ ՄԵՋ ԲԱՆԱԶԵԻ ՄԸ ԱՊԱՇՏՈՒԿԵԼ

Իրաքի իշխող խորհուրդը յայտնեց, որ պիտի փորձէ բանաձեւ մը ապահովել ՄԱԿի մէջ՝ իշխանութեան փոխանցումը արագացնելու համար: Մինչ այդ սակայն, ամերիկեան ուժերը կը շարունակէին գործողութիւնները սանձելու համար Սատամ Հիւսէյնի հետեւորդները, որոնք յարձակումներ կը գործեն ամերիկացի պինտուրներուն դէմ:

Յաջողական երկրորդ գիշերն ըլլալով՝ ամերիկացի պինտուրները ուժի ցուցադրութիւն կատարեցին Թիքրիթի մէջ, ուր ամերիկեան հրասայլերը, ուղղաթիռներն ու պինտուրները տողանցեցին քաղաքին փողոցներուն մէջ՝ յատուկ պատգամ մը փոխանցելով ըմբոստ ուժերու: Իրաքի տարածքին տեղի ունեցած գործողութիւններու ընթացքին, ամերիկեան ուժերը Կիրակի օրուրէս ի վեր ձերբակալած են 99 կասկածելիներ, ինչպէս նաեւ՝ սպաննած են վեց հոգի:

Իշխող խորհուրդը կը ծրագրէ բանաձեւի առաջարկ մը ներկայացնել ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին՝ զօրակցութիւն ապահովելու համար անցեալ Շաբաթ օր ստորագրած համաձայնութեան, որուն լոյսին տակ իշխանութիւնը շուտով պիտի փոխանցուի իրաքցիներուն: Բանաձեւի առաջարկը ենթադրել կու տայ, որ իշխող խորհուրդը ՄԱԿի աւելի լայն դերակատարութիւն մը հետապնդէ Իրաքի մէջ, երեւոյթ մը, որուն հաշտ աչքով չի հետեւիր դաշնակից ճակատը: Խորհուրդի անդամ Մահմուտ Ալի Օսման ըսաւ, որ բանաձեւը պիտի հետապնդուի ամբաստանաբար համար դաշնակից ճակատին հետ գոյացած համաձայնութեան ժամանակացոյցը:

Ուաշինկթըն տակաւին որեւէ հակադարձութիւն չունեցաւ Ապահովութեան Խորհուրդի բանաձեւի առաջարկին: ՄԱԿի աւելի լայն ու գործօն դերակատարութիւն կը պահանջէ նաեւ Եւրոպան: Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլը եւրոպացի պաշտօնակիցներու հետ հանդիպումի մը ընթացքին ըսաւ, որ Ուաշինկթըն պատրաստ է լսելու ՄԱԿի աւելի գործօն դերակատարութիւն պահանջող եւրոպական առաջարկները: Փաուըլը շեշտեց, որ Ուաշինկթըն կ'ուզէ, որ ՄԱԿ դերակատարութիւն ունենայ, որովհետեւ Իրաքի մէջ գործընթացը յառաջխաղացքի մէջ դնելու ծրագրին մաս կը կապմէ ՄԱԿ:

Պաշտպանութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտ իր կարգին նախատեսեց, որ Իրաքի ապագան ըլլայ փայլուն՝ Հարաւային Քորէայի նման, որ գրաւման ենթարկուած էր եւ որ սակայն հիմա կ'ապրի ժողովրդավարութեան ներքեւ: Ռամսֆելտը աւելցուց, երբ ամէն ինչ լաւ ընթանայ եւ Իրաքի մէջ հաստատուի իսկական ժողովրդավարութիւն, այդ պահուն բոլորին համար յստակ պիտի ըլլայ թէ ամերիկեան առաջնորդութեամբ յայտարարուած պատերազմը արդարացուցիչ պատճառներ ունէր:

### ՄՈՍԿՈՒԱ ԿԸ ԸՆՆԱԴՐԱՍԵ ՌԺԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՆԸ

Ռուսիա երէկ քննադատեց Միացեալ Նահանգներու «չափազանցում» ուժի գործածութեան հակամտութիւնը: Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով ըսաւ նաեւ, որ Իրաքի մէջ ծաւալած վայրագութեան ալիքը կը հաստատէ, թէ Մոսկուա իրաւունք ունէր դէմ կենալու Իրաքի դէմ յայտարարուած պատերազմին:

Իվանովը, որ կը խօսէր ռուսեամերիկացի նախկին ու ներկայ դիւանագետներու հետ հանդիպումի մը ընթացքին, դիտել տուաւ, որ Պաղ Պատերազմին նախկին թշնամիները՝ Խորհրդային Միութեան տապալումէն ի վեր, բաւական կայուն հիմներու վրայ հաստատած են իրենց փոխյարաբերութիւնները, բացեալ այսպէս աւելցուց Իվանովը, Մոսկուա գոհ չէ Ուաշինկթընի որդեգրած քաղաքականութեան բոլոր երեսներէն: Իվանովը ըսաւ նաեւ, որ Իրաքի դէմ յայտարարուած պատերազմը լրջօրէն խանգարեց Ուաշինկթըն-Մոսկուա կապերը: Ան շեշտեց, որ Մոսկուա կը շարունակէ հաստատ մնալ իր այն տեսակետին վրայ, որ սխալ նկատած էր պատերազմը:

Միւս կողմէ, Իրաքի «կառավարութեան» մէջ մարդկային իրաւանց հարցերու նախարարը՝ Ապտէլ Պատէթ Թուրքի քննադատեց իրաքցիներու դէմ ամերիկեան ուժերու կողմէ գործածուած բռնաբարումները: Թուրքի ըսաւ, որ գրաւող ուժերը մեծ խախտումներ կը կատարեն: Ան աւելցուց, որ այս ուղղութեամբ անհրաժեշտ պատգամը փոխանցուած է դաշնակից ուժերու իրամասնատարութեան, որովհետեւ իրաքցի ժողովուրդը պատրաստ չէ յաւելեալ շարչարանք կրելու:

(ԱՅՓ)

## ՊՈԼՍՈՅ ՄԷՋ ՍԻՆԱԿՈԿՆԵՐՈՒ ՊԱՅԹՈՒՄԻՆ ԳԾՈՎ ՅԵՏԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Թուրք քննիչներու կարծիքով «Քալիտա»-ի հետ կապեր ունեցող տեղացի իսլամականներ կը կանգնին Պոլսոյ 2 սինակոկներու դէմ յարձակումներուն ետին, յայտնած են պաշտօնատարներ երէկ:

Թրքական թերթեր երէկ իրենց առաջին էջերով հրատարակած են նկարները չորս անձերու, որոնք, ըստ ոստիկանութեան, մեղսակից եղած են գործողութիւններուն եւ նշուած իրրեւ իսլամական ընդդատակեայ իմրակներու անդամներ՝ ծայրայեղական օտար ցանցերու հետ կապերով: Անոնք մարտուած են Աֆղանիստանի եւ Իրանի նման երկիրներու մէջ:

Իսլամայի խորհրդարանի նախագահ Ռիւլըն Ռիվլին Պոլսոյ մէջ մամուլ ասուելիս մը ընթացքին յայտնած է, թէ թրքական գաղտնի ապասարկութիւններուն հետ «գտանք, թէ երկու անաբեկիչները, որոնք թուրք քաղաքայիններ են, Աֆղանիստանի մէջ ուսում ստացած են եւ Իրանի մէջ մարտուած»:

Արաբական թերթ մը Կիրակի օր հաղորդած էր, որ «Քալիտա»-ի մէկ ճիւղը ստանձնած է 2 սինակոկներուն դէմ անցեալ Շաբաթ օրուան յարձակումներուն պատասխանատուութիւնը: Անոնք 25 Կոհ եւ 300 վիրաւոր խլած էին:

Արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլ ըսած է, թէ գտնուած կարգ մը փաստերը կրնան «Քալիտա»-ի հետ կապ մը նշանակել, սակայն ան աւելցուցած է, որ վերջնական եզրակացութիւն մը կարելի է ունենալ Ա.Տ.Ե. կ'ընտրութիւններէ ետք միայն:

«Ռատիքալ» թերթը մինչ այդ մէջբերած է գաղտնի ապասարկութեանց պատասխանատու Մինքալ Աթասակիւնը, որ վերջերս թղթակիցներու ըսած է, թէ Թուրքիա ամիս մը առաջ «Քալիտա»-ի ենթադրեալ 8 անդամներ իրենց ծննդավայր երկիրը դրկած է:

«Սակայն այդ մասին չի օսեցանք, որովհետեւ չենք ուզեր, որ Թուրքիա թիրախ դառնայ», ըսած է ան:

Վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան երէկ խօսած է քննութեանց մէջ «կարելորդ պարզացումներու մասին»: Այսուհանդերձ, Պոլսոյ պետական ապահովութեան մէկ ատեանը քննութեան գծով արգիլած է մամուլ տեղեկութիւններ փոխանցել:

● ԵԳԻՊՏՈՍԻ նախագահ Հիւսնի Մուպարաբ երէկ խստի քննադատած է սինակոկներու վրայ յարձակումները:

(ԱՅՓ)

### ԹՐԲԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ

## ՎԵՐՋ ԴՐՈՒ ՊՈԼՍՈՅ ԳԼԽՈՒՐ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՐՈՒՄԱՆ

**ՊՈԼԻՍ, 18 (ԱՅՓ).—** Թրքական ոստիկանութիւնը երեքշաբթի օր յարձակած է Պոլսոյ գիւաւոր դատարանին վրայ՝ վերջ տալու համար քիւրտ շուրջ 20 ցուցարարներու կողմէ դատարանին գրաւումին: Անոնք կը պահանջէին քիւրտ ըմբոստ ղեկավար Ապտիլլա Օճայանի ապատարածութիւնը:

Ոստիկանութիւնը արցունքաբեր կապ գործածած է ցուցարարներուն դէմ, որոնք պահարաններու ետին արգիլած են քանի մը դատարարներու եւ փաստաբաններու, որ դատարանին հեռանան:

21 ցուցարարներու բոլորը ձերբակալուած են ոստիկանութեան հետ կարճատեւ բախումէ մը ետք:

1999ին Օճայանի ցեղանոց քննարկութեան ենթարկուած է թրքական մեկուսացած բանտ-կղզիի մը վրայ, դաւաճանութեան յանցանքով ամբաստանուելէ ետք:

Խմբակը «քրտական հարցին ժողովրդավար լուծում մը» ապահոված է, ինչպէս նաեւ՝ Օճայանի արգելափակման վայրին՝ Իմրալի բանտին փակումը:

Ոստիկանութիւնը երկուշաբթի օր ձերբակալած է 5 անձեր, որոնց շուրջ կային կասկածներ, թէ Պոլսոյ մէջ ոստիկանական մը դէմ անձնասպանական գործողութիւն մը կը դաւեն՝ ՔԱԿի անունով:

**N. DEDEIAN s.a.r.l.**  
SANITARY WEAR & TILES

FABBRICA MARMI E GRANITI

N. DEDEIAN s.a.r.l. was established in 1951. Since then we are working with sanitary ware ceramic tiles, fittings & hydromassage tubs.

Old Port, Bari - Genova - Italia

Planet, ristorante - Reggio Calabria - Italia

Hotel President - Cnidi - Italia

Chiesa S. Vito Muro - Biondi - Italia

We are sole agents of Italy's finest ceramic tiles Gruppo ABK, Epoca, Tempa, Elle-gl, I.T.S.

Those products are all designed to meet the latest dwelling requirements, although perfectly in line with tradition.

LEBANON - Beirut - Nahr El-Mol - Roumieh Highway - N Dedeian Center - Cell. (+961) - 3 - 204309 - Tel. (+961) - 1 - 901092 - Fax: (+961) - 1 - 901093  
LEBANON - Tripoli - El-Mina - Custom Sou. - Tel. (+961) - 6 - 615095 - Telefax: (+961) - 6 - 202126 - E-mail: ndedeian@hotmail.com

**Le Savoir-Faire en Lumière.**

**G. AYANIAN & SONS**

Dora, (01)255222/3/4/5/6  
Gemmayzé, (01)447000-445396  
(03)627728/9  
Fax: (01)265187-582357  
E-Mail: gasons@dm.net.lb  
www.ayanian.com